# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
## «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-05/21» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Մեծամոր

17.08.2021թ.
ժամը 9:00

***Հայտերի բացման և գնահատման նիստը տևել է 13.08.2021թ.-20.08.2021թ.:***

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝ (ԳՊ/ԳԱՊ)**

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար – Ն.Թադևոսյանը,

**Գնահատող անդամներ՝ (ԳՊ/ԳԱ)**

Աշխատակազմի գլխավոր մասնագետ – Ս.Սահակյանը,

Աշխատակազմի առաջատար մասնագետ – Վ.Դաբաղյանը,

**Քարտուղար՝(ԳՊ/ՄՀմ)** – Ա.Գևորգյանը:

**«ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-05/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

**(Ն.Թադևոսյան)**

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-05/21» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանք՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-05/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

**(Ն.Թադևոսյան)**

1.1 ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-05/21» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1 | «Օրիոն-7» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2. «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-05/21» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանք՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

**(Ն.Թադևոսյան)**

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և դրանք համապատասխանում են «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-05/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

2.4 Մասնակցի հայտով ներկայացված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-05/21» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**3. Յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

**(Ն.Թադևոսյան)**

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Նախահաշվային գումարը (ՀՀ դրամ) | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների գնային առաջարկը (ՀՀ դրամ) | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | անվանումը | արժեքը | ԱԱՀ-ն | Ընդհանուր գինը |
| 1 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ | դրամ | 7 949 430 | «Օրիոն-7» ՍՊԸ | 20 122 080 | 4 024 416 | 24 146 496 |

3.2 Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Այսուհետև՝ Կարգ/ 40-րդ կետի 5-րդ ենթակետի և ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերի պահանջները, և քանի որ ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որոշեց 19.08.2021թ.-ի ժամը 11:00-ին ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանում (ք. Մեծամոր, Վարչական կենտրոն 1) «Օրիոն-7» ՍՊԸ-ի հետ կազմակերպել բանակցություններ:

Բանակցության համար նշանակված օրը և ժամին, «Օրիոն-7» ՍՊԸ-ի տնօրենը ներկայացել է բանակցության, սակայն բանակցության ընթացքում չի փոփոխել հայտով ներկայացված գնային առաջարկը, ուստի բանակցության արդյունքում մասնակցի հայտով ներկայացված գինը մնացել է անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**4. «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-05/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.**

**(Ն.Թադևոսյան)**

4.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները և քանի որ բանակցության ավարտից հետո հայտ ներկայացրած միակ մասնակցի գնային առաջարկը դեռևս գերազանցում էր գնման առարկայի ձեռքբերման համար նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-05/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարել չկայացած:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:**

**(Ն.Թադևոսյան)**

5.1 «ՀՀ ԱՄ ՄՀ-ԳՀԱՇՁԲ-05/21» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**6. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

**(Ն.Թադևոսյան)**

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի նախագահ՝ (ԳՊ/ԳԱՊ)** _______________ Ն. Թադևոսյան

**Գնահատող անդամ՝ (ԳՊ/ԳԱ)** _______________ Ս. Սահակյան

**Գնահատող անդամ՝ (ԳՊ/ԳԱ)** _______________ Վ. Դաբաղյան

**Քարտուղար՝ (ԳՊ/ՄՀՄ)** _______________ Ա. Գևորգյան